

Ծ Ա Ն Ո Ւ Ց Ա Գ Ի Դ Ո Ր Ո Շ Մ Ա Ն Կ Ա Մ Վ Ճ Ռ Ի Մ Ա Ս Ի Ն

ՈՒՂԱՐԿՄԱՆ ԹՎԱԿԱՆԸ՝ 00 / 00 / 00  
ՆՊԱՍՏԻ ՏԱՐՎԱ ՄԿԻԶԲԸ՝ 00 / 00 / 00

ՀԱՅՑՎՈՐԻ ԱՆՈՒՆԸ  
ՀԱՅՑՎՈՐԻ ՀԱՍՑԵՆ  
ՔԱՂԱՔ

CA ՓՈՍՏԱՅԻՆ ԻՆՂԵՔՍ

EDD-Ի ՀԵՌԱԽՈՍՍՀԱՄԱՐՆԵՐ՝  
ԱՆԳԼԵՐԵՆ 1-800-300-5616  
ԻՍՊԱՆԵՐԵՆ 1-800-326-8937  
ԿԱՆՏՈՆԵՐԵՆ 1-800-547-3506  
ՄԱՆԴԱՐԻՆ ՉԻՆԱՐԵՆ 1-866-303-0706  
ՎԻԵՏՆԱՄԵՐԵՆ 1-800-547-2058  
TTY 1-800-815-9387

SSA ՀԱՄԱՐԸ՝ 000-00-0000

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ԶՈՒՆԵՔ ՆՊԱՍՏՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ՝ ԸՍՏ ԿԱԼԻՖՈՐՆԻԱ ՆԱՀԱՆԳԻ ԳՈՐԾԱԶՐԿՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԳՐՔԻ 1256-ՐԴ ԲԱԺԻՆ՝ ՄԿՍԱԾ 00 / 00 / 00-ԻՑ ԵՎ ՇԱՐՈՒՆԱԿՎԵԼՈՎ ԱՅՆՔԱՆ, ՄԻՆՉԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՎԵՐԱԴԱՌՆԱՔ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ԵՎ \$0,00 ԿԱՄ ԱՎԵԼԻ ՎԱՍՏԱԿԵՔ ԲԱՐԵԽԻՂՃ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԻԶՈՑՈՎ, ԵՎ ԴԻՄԵՔ ՎԵՐԸ ՀԻՇԱՏԱԿՎԱԾ ԳՐԱՍԵՆՅԱԿԻՆ՝ ՁԵՐ ՀԱՅՑԸ ՎԵՐԱԲԱՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ԴՈՒՔ ԴՈՒՐՄ ԵՔ ԵՎԵԼ ՁԵՐ ՎԵՐՁԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ՝ (ԳՈՐԾԱՏՈՒԻ ԱՆՈՒՆԸ): ԴՈՒՔ ՑՈՒՅՑ ՉԵՔ ՏՎԵԼ, ՈՐ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ ԴՈՒՐՄ ԳԱԼԼ ԱՆՀՐԱԺԵՇՏ ԷՐ, ԿԱՄ ՈՐ ԴՈՒՐՄ ԳԱԼՈՒՑ ԱՌԱՋ ՈՒՍՈՒՄՆԱՄԻՐԵԼ ԵՔ ԲՈԼՈՐ ՈՂՋԱՄԻՑ ՏԱՐԲԵՐԱԿՆԵՐԸ: ԱՌԿԱ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՇՎԻ ԱՌՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՈՇՈՒՄ Է, ՈՐ ԴՈՒՔ ՉԵՔ ԲԱՎԱՐԱՐՈՒՄ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՕՐԻՆԱԿԱՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԸ: 1256-ՐԴ ԲԱԺԻՆԸ ՍԱՀՄԱՆՈՒՄ Է. ԱՆՀԱՏԸ ԶՐԿՎՈՒՄ Է ԻՐԱՎՈՒՆՔԻՑ, ԵԹԵ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՐՉՈՒՄ Է, ՈՐ ՆԱ ԿԱՄԱՎՈՐ ԼՔԵԼ Է ԻՐ ԱՄԵՆԱՎԵՐՁԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ ԱՌԱՆՑ ԲԱՎԱՐԱՐ ՀԻՄՔԻ, ԿԱՄ ՀԱԿԱԻՐԱՎԱԿԱՆ ՎԱՐՔԱԳԾԻ ՊԱՏՃԱՌՈՎ ՀԵՌԱՑՎԵԼ Է ԻՐ ԱՄԵՆԱՎԵՐՁԻՆ ԱՇԽԱՏԱՆՔԻՑ: 1260A ԲԱԺԻՆԸ ՍԱՀՄԱՆՈՒՄ Է. ԱՆՀԱՏԸ, ՈՎ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿՎԵԼ Է 1256 ԲԱԺԻՆ ՀԻՄԱՆ ՎՐԱ, ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿՎՈՒՄ Է ԱՅՆՔԱՆ ԺԱՄԱՆԱԿ, ՄԻՆՉԵՎ ԻՐԱՎՈՒՆՔԻՑ ԶՐԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆԻՑ ՀԵՏՈ ՆԱ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԻ ԲԱՐԵԽԻՂՃ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՄԵՋ, ՈՐԻ ՀԱՄԱՐ ՎԱՐՉԱՏՐՈՒԹՅՈՒՆ ՍՏԱՆԱ ԻՐ ՇԱԲԱԹԱԿԱՆ ՆՊԱՍՏԻ ԳՈՒՄԱՐԻ ՀՆԳԱՊԱՏԻԿԻՆ ՀԱՎԱՍԱՐ ԿԱՄ ԱՅՆ ԳԵՐԱԶԱՆՑՈՂ ՉԱՓՈՎ:

ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄ.

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ, ԵԹԵ ՀԱՄԱԶԱՅՆ ՉԵՔ ԱՅՍ ՈՐՈՇՄԱՆ ԱՄԲՈՂՁՈՒԹՅԱՄԲ ԿԱՄ ՄԱՍԱՄԲ:

ԲՈՂՈՔԱՐԿԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏՔ Է ԿԱՏԱՐԵՔ ՍՏՈՐԵՎ ՆՇՎԱԾ ԲՈԼՈՐ ՔԱՅԼԵՐԸ.

- A. ԼՐԱՅՐԵՔ ԿԻՑ ՏՐՎԱԾ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՁԵՎԸ (DE 1000M) ԿԱՄ ԳՐԵՔ ՆԱՄԱԿ՝ ՆՇԵԼՈՎ, ՈՐ ՈՒԶՈՒՄ ԵՔ ԲՈՂՈՔԱՐԿԵԼ ԱՅՍ ՈՐՈՇՈՒՄԸ: ԵԹԵ ՆԱՄԱԿ ԵՔ ԳՐՈՒՄ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ, ԲԱՑԱՏՐԵՔ ՊԱՏՃԱՌԸ, ԹԵ ԻՆՉՈՒ ՀԱՄԱԶԱՅՆ ՉԵՔ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՆԸ: ՎԱՐՉՈՒԹՅԱՆԸ ՆԵՐԿԱՅԱՑՎԱԾ ՑՈՒՐԱՔԱՆՉՑՈՒՐ ՓԱՍՏԱԹՂԹԻ ՎՐԱ ԳՐԵՔ ՁԵՐ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒԹՅԱՆ ՔԱՐՏԻ ՀԱՄԱՐԸ: (ՄԱՍ 22, ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ (ԿԿԺ), ԲԱԺԻՆ 5008) (TITLE 22, CALIFORNIA CODE OF REGULATIONS (CCR), SECTION 5008):
- B. DE 1000M ՁԵՎԸ ԿԱՄ ՁԵՐ ՆԱՄԱԿԸ ՓՈՍՏՈՎ ՈՒՂԱՐԿԵՔ ԱՅՍ ՈՐՈՇՄԱՆ ԱՌԱՋԻՆ ԷԶՈՒՄ ՆՇՎԱԾ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ՀԱՍՑԵՆՎ:
- C. ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ ՆԵՐԿԱՅԱՑՐԵՔ ԱՅՍ ԾԱՆՈՒՑԱԳՐԻ ՈՒՂԱՐԿՄԱՆ ԹՎԱԿԱՆԻՑ ՀԵՏՈ ԵՐԵՍՈՒՆ (30) ՕՐՎԱ ԸՆԹԱՅՔՈՒՄ ԿԱՄ 00 / 00 / 00-ԻՑ ՈՉ ՈՒՇ:

ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՏՐՎԱԾ ԵՆ «ՆՊԱՍՏՆԵՐԻ ԵՎ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՐՈՆՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՂԵՑՈՒՅՑ» («A GUIDE TO BENEFITS AND EMPLOYMENT SERVICES») ՁԵՆՆԱՐԿՈՒՄ: ԵԹԵ ՉՈՒՆԵՔ ԱՅՐ ՁԵՆՆԱՐԿԸ, ԴԻՄԵՔ ԱՅՍ ԾԱՆՈՒՑԱԳՐԻ ԱՌԱՋԻՆ ԷԶՈՒՄ ՆՇՎԱԾ ԳՐԱՍԵՆՅԱԿԻՆ:

ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ.

ԵՐԲ ՁԵՐ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ ՍՏԱՑՎԻ, ՁԵՐ ԳՈՐԾԸ ԿՎԵՐԱՆԱՅՎԻ: ԵԹԵ ՈՐՈՇՈՒՄԸ ՆՈՒՅՆԸ ՄՆԱ, ՄԵՆՔ ՁԵՐ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ ԿՈՒՂԱՐԿԵՆՔ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿ: ԵԹԵ ԲՈՂՈՔԱՐԿԵՔ 30 ՕՐԻՑ ՀԵՏՈ, ԱՊԱ ՊԵՏՔ Է ՆՇԵՔ ՆԱԵՎ ՈՒՇԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌԸ: ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱՎՈՐԸ ԿՈՐՈՇԻ՝ ԱՐԴՅՈՔ ԲԱՎԱՐԱՐ ՀԻՄՔ ՈՒՆԵՑԵԼ ԵՔ ՈՒՇԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ: ԵԹԵ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱՎՈՐԸ ՈՐՈՇԻ, ՈՐ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆ ՈՒՇ ՆԵՐԿԱՅԱՑՆԵԼՈՒ ԲԱՎԱՐԱՐ ՀԻՄՔ ՉԵՔ ՈՒՆԵՑԵԼ, ՁԵՐ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄԸ ԿՍԵՐԺՎԻ:

ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԸ ՁԵՁ ԿՈՒՂԱՐԿԻ ՆԱՄԱԿ, ՈՐՏԵՂ ՆՇՎԱԾ ԿԼԻՆԵՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ՕՐԸ, ՎԱՅՐԸ ԵՎ ԺԱՄԸ, ՈՒ ՄԻ ԳՐՔՈՒՅԿ, ՈՐՏԵՂ ԲԱՑԱՏՐՎՈՒՄ ԵՆ ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԼՍՈՒՄՆԵՐԻ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԸ: ԼՍՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱՎՈՐԸ ԿԼՄԻ ՁԵՁ, ԿՔՆԵՒ ՓԱՍՏԵՐԸ ԵՎ ԿԿԱՅԱՑՆԻ ՈՐՈՇՈՒՄ: ԴՈՒՔ ԿԱՐՈՂ ԵՔ ՈՒՆԵՆԱԼ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ ԿԱՄ ՈՐԵՎԷ ԱՅԼ ԱՆՁ՝ ՁԵՁ ՕԳՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ:

ԵԹԵ ՊԱՀԱՆՁՈՒՄ ԵՔ ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐ,

ՔԱՆԻ ԴԵՌ ՍՊԱՍՈՒՄ ԵՔ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱՎՈՐԻ ՈՐՈՇՄԱՆԸ, ԱՊԱ ՊԵՏՔ Է ՇԱՐՈՒՆԱԿԵՔ ՁԵՐ ՀԱՅՑԻ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ ՓՈՍՏՈՎ ՈՒՂԱՐԿԵԼ EDD-ԻՆ: ԵԹԵ ԲՈՂՈՔԱՐԿՈՒՄՆԵՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻՑ ՉՍՏԱՆԱՔ ՀԱՅՑԻ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ ԿԱՄ ՁԵՎԱԹՈՒՂԹԸ, ԴԻՄԵՔ ԱՅՍ ԾԱՆՈՒՑԱԳՐԻ ԱՌԱՋԻՆ ԷՋՈՒՄ ՆՇՎԱԾ ԳՐԱՍԵՆՅԱԿԻՆ: ԵԹԵ ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱՍՏՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԵՐՈՎ ԴԱՏԱՎՈՐԸ ՈՐՈՇԻ, ՈՐ ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆԱԿ ԵՔ ՆՊԱՍՏՆԵՐ ՍՏԱՆԱԼՈՒ, ՄԵՆՔ ԿԱՐՈՂ ԵՆՔ ՆՊԱՍՏՆԵՐ ՎՃԱՐԵԼ ՄԻԱՅՆ ԱՅՆ ԴԵՊՔՈՒՄ, ԵԹԵ ՀԱՅՑԻ ՁԵՎԱԹՂԹԵՐԸ ՍՏԱՑՎԵԼ ԵՆ ԱՅԴ ՇԱԲԱԹՎԱ ՀԱՄԱՐ:

ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ. ԴԻՄԵՔ EDD-ԻՆ ՀԵՏԵՎՅԱԼ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ՝ (1) ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒՂԵԳՐԵՐ, (2) ՀԱՇՄԱՆԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎԱԳՐՈՒԹՅՈՒՆ, (3) EDD-Ի ԱՅԼ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ, (4) ԱՅԼ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՌԱՋԱՐԿՎՈՂ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ: